Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Երևանի պետական համալսարանի
Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի
2023 թ. սեպտեմբերի 14-ին կայացած թիվ 2 նիստի

Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի 2023 թ. սեպտեմբերի 14-ին կայացած թիվ 2 նիստը նախագահում էր ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի գրասենյակի ղեկավար-դեկանի տեղակալ՝ կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը:

Գիտական խորհրդի 38 անդամներից գիտական խորհրդի նիստին մասնակցել են 28-ը: Անդամներից 3-ը նիստին միացել էին հեռավար հաղորդակցության Zoom հարթակի օգնությամբ:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի կանոնակարգի հաստատման հարցը:
2. Հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների տարեկան ատեստավորման հարցը:
3. Առկա ուսուցմամբ ասպիրանտների թեկնածուական ատենախոսությունների թեմաների և գիտական ղեկավարների հաստատման հարցը:
4. ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթին մասնակցելու համար կենսաբանության ֆակուլտետից թեկնածուների առաջադրման հարցը:
5. Ընթացիկ հարցեր:

Նիստի նախագահն առաջարկված օրակարգը հաստատելուց հետո անցավ հարցերի ներկայացմանը:

1. ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի կանոնակարգի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի գրասենյակի ղեկավար-դեկանի տեղակալ՝ կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը: Նա ներկայացրեց Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի թիվ 1/3 որոշումը (11 սեպտեմբեր 2023 թ.), որում նշված է «Երևանի Պետական Համալսարան» հիմնադրամի կառուցվածքային ստորաբաժանման օրինակելի կանոնակարգը հաստատելու և 2015 թ. սեպտեմբերի 24-ին ընդունված «Երևանի Պետական Համալսարանի ֆակուլտետի օրինակելի կանոնադրությունը» ուժը կորցրած ճանաչելու մասին:

Ելույթի ընթացքում պարոն Կ.Ա. Ղազարյանը գիտական խորհրդի անդամներին ծանոթացրեց կանոնակարգի ընդհանուր դրույթների հետ, անդրադարձավ ֆակուլտետի իրավասությանը, կառավարմանը և կառուցվածքին:

Նշվեց, որ պետք է կատարել փոփոխություններ ֆակուլտետի կառավարման կոլեգիալ մարմին հանդիսացող գիտական խորհուրդի կազմում: Անդամների թիվը պետք է լինի 32, նախկին 38-ի փոխարեն: Հայտնի է, որ գիտական խորհուրդը կազմված է ի պաշտոնե, հրավիրյալ ու ընտրովի անդամներից: Գիտական խորհրդի ի պաշտոնե ու հրավիրյալ անդամների թիվը չի կարող գերազանցել գիտական խորհրդի կազմի 50 տոկոսը: Գիտական խորհրդի անդամների առնվազն 50 տոկոսն ընտրովի անդամներն են:

Գիտական խորհրդի կազմում ի պաշտոնե ընդգրկվում են դեկանը, գրասենյակի ղեկավար-տեղակալ(ներ)ը, ամբիոնների վարիչները, գիտահետազոտական ստորաբաժանման (բազային ֆինանսավորմամբ) ղեկավարը, մեթոդական խորհրդի նախագահն ու արհբյուրոյի նախագահը:

Գիտական խորհրդի կազմում դեկանի հրավերով կարող են ընդգրկվել ֆակուլտետի գործունեության կամ կրթական ծրագրերի գծով այլ մասնագետներ՝ գիտական խորհրդի կազմի մինչև 20 տոկոսի չափով: Մեկ տարվա ընթացքում գիտական խորհրդի առնվազն երեք նիստից անհարգելի բացակայելու դեպքում, գիտական խորհրդի անդամի լիազորությունները դադարեցվում են:

Գիտական խորհրդի ընտրովի անդամներ կարող են առաջադրվել հիմնական աշխատանքային պայմանագրով կամ ներքին համատեղությամբ ամբիոնում աշխատող պրոֆեսորադասախոսական կազմի աշխատողները:

Նշվեց, որ գիտական խորհրդի անդամների առնվազն 25 տոկոսը պետք է լինեն սովորողները, որոնց ընտրությունը կատարում է ֆակուլտետի ուսանողական խորհուրդը: Խորհրդի սովորող անդամի փոփոխությունը կատարվում է ուսանողական խորհրդի կողմից: Գիտական խորհրդի լիազորությունների ժամկետը 5 տարի է:

Ղազարյանը փաստեց, որ գիտական խորհրդի նիստերը գումարվում են ուսումնական տարվա ընթացքում առնվազն 8 անգամ և գիտական խորհրդի որոշումները պարտադիր են ֆակուլտետի աշխատողների ու սովորողների համար:

Գիտական խորհրդի քարտուղարին գիտական խորհրդի կազմից դեկանի ներկայացմամբ նշանակում է ռեկտորը:

Գիտական խորհրդում պրոֆեսորադասախոսական կազմի թափուր պաշտոնի տեղակալման, ամբիոնի վարիչի մրցութային ընտրության քվեարկությունը կատարվում է փակ, գաղտնի քվեարկությամբ:

Ամբիոնի վարիչը սահմանված կարգով տարեկան մեկ անգամ հաշվետվություն է ներկայացնում ֆակուլտետի գիտական խորհրդում: Ամբիոնի աշխատանքների մասին ամբիոնի վարիչի հաշվետվության ժամկետն ու ձևը սահմանում է գիտական խորհուրդը: Խոսվեց նաև ամբիոններում անցկացվող նիստերի մասին, որի ժամանակ պետք է քննարկվեն կրթական ու գիտական հարցեր:

Նշվեց նաև, որ ֆակուլտետի կազմում գործող գրասենյակի մասին, որը կազմակերպում է ֆակուլտետի ընթացիկ գործունեությունը, գրագրության վարումը, ուսանողների, պրոֆեսորադասախոսական կազմի, շրջանավարտների ու ոլորտային

գործընկերների հետ տարվող աշխատանքները, կատարում է ուսումնական ու գիտահետազոտական գործընթացին օժանդակող այլ գործառույթներ:
ՈՐՈՇԵՑԻՆ՝ բաց քվեարկության արդյունքում ընդունել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կենսաբանության ֆակուլտետի նոր կանոնակարգը:

2. ԼՍԵՑԻՆ՝ Հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների տարեկան ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի գրասենյակի ղեկավար-դեկանի տեղակալ՝ կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը, գենետիկայի և բջջաբանության ամբիոնի չորրորդ տարվա հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Ալիսա Թադևոսի Մանուկյանը (գիտական ղեկավար՝ կ.գ.դ., պրոֆ. Ռ.Մ. Հարությունյան), կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի երկրորդ տարվա հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Դիանա Համլետի Ղևոնդյանը (գիտական ղեկավար՝ կ.գ.դ., դոցենտ Հ. Հ. Փանոսյան), երկրորդ տարվա հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Սոնա Հազարապետի Նիկոլյանը (գիտական ղեկավար՝ կ.գ.դ., դոցենտ Ա. Ա. Փոլադյան), մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի առաջին տարվա հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Գևորգ Ավագի Ավագյանը (գիտական ղեկավար կ.գ.թ., դոցենտ Ա.Ֆ. Կարապետյան), կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի հայցորդ Ջեմմա Գուրգենի Մանոյանը (գիտական ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Լ. Ս. Գաբրիելյան): Ասպիրանտները և հայցորդը ներկայացրեցին հաշվետու տարում կատարած աշխատանքները: Ստորև ներկայացվում են համառոտ հաշվետվությունները:

Գենետիկայի և բջջաբանության ամբիոն
Ալիսա Թադևոսի Մանուկյան չորրորդ տարվա հեռակա ուսուցմամբ ասպիրանտ (գիտական ղեկավար՝ կ.գ.դ., պրոֆ. Ռ.Մ. Հարությունյան):

Հաշվետու ժամանակաշրջանում Հայաստանի ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտում ուսումնասիրել է AREAL արագացուցիչով մակածված էլեկտրոնային փնջերի ճառագայթման ազդեցությունը բջիջների վնասվածքների մակարդակի գնահատման և ռեպարացիոն ուղիների ակտիվության վրա: Ա. Մանուկյանն ընդհանուր պատրաստվածության կրթամասից հանձնել է «Անձնային աճ և ինքնակարգավորում» և ստացել է 3 կրեդիտ: 2022-2023 ուս. տարվա ընթացքում մասնակցել է Armenian Meeting: “Climate Changes: Adaptation” գիտական համաժողովին և ներկայացրել է «DNA Damage Induced By Ultrashort Pulsed Electron Beam Irradiation In Human Cancer And Normal Cells» վերնագրով հոդված: Ա. Մանուկյանն համարվում է «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի «Գիտական սարքերի և/կամ նյութերի ձեռքբերման» մրցույթի շահառու (Ծածկագիր 22YSSPD-020): Ա. Մանուկյանը մշակել է իր թեմայի վերաբերյալ գիտական գրականություն և վերլուծել փորձնական մասն ամբողջությամբ:

Կենդանաբանության ամբիոն
Արմինե Մանվելի Քոսյանի երրորդ տարվա հեռակա ուսուցմամբ ասպիրանտ (գիտական ղեկավար՝ կ.գ.դ., պրոֆեսոր Մ.Ս. Առաքելյան)

Կատարվել է սարդերի հավաք Հայաստանի բոլոր մարզերից: Հավաքագրվել է մոտ 1300 սարդ: Բարձր ազդեցության գործակից ունեցող ամսագրում 2023թ. հրատարակել է մեկ հոդված, որտեղ գիտության համար նկարագրվել է սարդի մեկ նոր տեսակ: Հոդվածի վերնագիրը՝ «Notes on Dysderidae (Arachnida, Araneae) of Armenia and Iran, with new species and records»:

Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոն
Գևորգ Ավագի Ավագյան առաջին տարվա հեռակա ուսուցմամբ ասպիրանտ (գիտական ղեկավար կ.գ.թ., դոցենտ Ա.Ֆ. Կարապետյան):

Հաշվետու տարվա ընթացքում իրականացվել են ինչպես փորձանմուշների հավաքագրում, այնպես էլ լաբորատոր ուսումնասիրություններ, մասնավորապես ուսումնասիրվել և գնահատվել է առնետերի օրգանների հյուսվածքաբանական փոփոխությունները օձի (Անդրկովկասյան գյուրզա) թույնի ազդեցությամբ:

Հաշվետու տարում իրականացվել են նաև փորձեր կապված թույնի և հակաթույնի ազդեցությունը գնահատելու համար: Տարվա ընթացքում մասնակցել է Հունաստանում կայացած կոնֆերանսին՝ ներկայացնելով աշխատանք, որը տպագրվել է «Molecular and Cellular Pathways of Aging in Hematopoiesis» աբստրակտների ժողովածուում (2023): Հաշվետու տարվա ընթացքում մասնակցել է նաև հետևյալ դասընթացներին և հավաքել գումարային 29 կրեդիտ:

1. Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն - 4կր.
2. Անգլերեն լեզու- 4կր.
3. Գիտության փիլիսոփայություն - 5կր.
4. Մասնագիտական հաղորդակցման հոգեբանություն - 3կր.
5. Մարդկային և նյութական ռեսուրսների կառավարում - 2կր.
6. Կայուն զարգացում և գլոբալ մարտահրավերներ - 5կր.
7. Անձնային աճ և ինքնակարգավորում - 3կր.
8. Համալսարանական դասավանդման դիդակտիկա - 3կր.

Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոն
Գայանե Մխիթարի Հայրապետյան՝ երրորդ տարվա հեռակա ուսուցմամբ ասպիրանտ (գիտական ղեկավար՝ կ.գ.դ., պրոֆ. Կ. Ա. Թոչունյան):

Հաշվետու ժամանակահատվածում մասնակցել է 2 կոնֆերանսների, որտեղ հանդես է եկել ստենդային հաղորդմամբ (International 21st Gums & Stabilisers for

the Food Industry Conference - Thessaloniki, Greece, June 6th-9th, 2023; Forum of Young Researchers (May 16-17, 2023), Dijon, France):

Ունեցել է լաբորատոր պրակտիկա ուսանողների հետ (փորձերի արդյուքների մշակում՝ 34 ժամ, քննարկում՝8 ժամ), ինչպես նաև Ֆրանսիայի համալարանում մասնակցել է հավելյալ դասերի (ընդհանուր 98 ժամ, 15 մոդուլ, 24 կրեդիտ, չհաշված դասավանդման ժամերը և կրեդիտները (տես կից փաստաթուղթը)):

Նշված ժամանակահատվածում տպագրել է մեկ հոդված «Sequential extraction of high-added value molecules from grape pomace via supercritical fluid extraction applying water as co-solvent» վերնագրով «Royal Society of Chemistry» ամսագրում, մեկ հոդված «Pectin production processes, structure, properties, applications, and related challenges: a critical review from multiple angles» վերնագրով "Critical Reviews in Food Science and Nutrition" ամսագրում ստուգման փուլում է և ևս մեկը «Temperature Impact on SC-CO2 Extracted Oil from Winery Waste and Its Thermal Behavior in Differential Scanning Calorimetry (DSC)» վերնագրով պատրաստման փուլում է:

Դիանա Համլետի Ղևոնդյան՝ երկրորդ տարվա հեռակա ուսուցմամբ ասպիրանտ (գիտական ղեկավար՝ կ.գ.դ., դոցենտ Հ. Հ. Փանոսյան):

Հաշվետու ժամանակահատվածում պարտադիր դասընթացներից հավաքել է 3 կրեդիտ: Դիմել է ԿԳՄՍ Գիտության կոմիտեի կողմից հայտարարված «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր-2023» մրցույթին «Թերմոֆիլների կողմից արտաբջջային պոլիմերային միացությունների արտադրության ուսումնասիրում. բաղադրության և բնապահպանական կիրառությունների պատկերացումներ» թեմայով և Ձեռնարկչությունների Ինկուբատոր հիմնադրամի կողմից հայտարարված «Ասպիրանտների աջակցության ծրագիր-2023» մրցույթին «Էքստրեմոֆիլ մանրէների արտաբջջային և ներբջջային պոլիմերներ» թեմայով:

Սույն թվականի մայիսի 7-ից մինչև հուլիսի 9-ը վերապատրաստվել է Իտալիայի Կենսամոլեկուլային քիմիայի ինստիտուտում, իրականացրել է հետազոտական աշխատանքներ, որի հիման վրա նախապատրաստվում է հոդված: Ստացված արդյունքները ներկայացվել են հուլիսի 9-13-ին Համբուրգում (Գերմանիա) կայացած FEMS2023 միջազգային գիտաժողովին ստենդային հաղերդմամբ՝ «Parageobacillus sp. H-70 as a promising thermophilic Exopolysaccharide producing strain» վերնագրով:

Տպագրության է ներկայացվել մեկ հոդված.

Diana Ghevondyan, Pargev Hovhannisyan, Armine Margaryan, Ani Paloyan, Tigran Soghomonyan, Hovik Panosyan, Nils-Kåre Birkeland, Garabed Antranikian. Molecular cloning, expression, and biochemical characterization of thermostable and detergent resistant α-amylase from Anoxybacillus karvacharensis K1 and its production based on whey.

Համահեղինակ է մեկ տպագրված գրքի գլխի.

Tadevosyan M., Yeghiazaryan S., Ghevondyan D., Saghatelyan A., Margaryan A., Panosyan H. Microbial thermostable hydrolases (amylases, lipases, and keratinases) and polymerases: biology and applications. In: Microbial Syntrophy Mediated Eco-enterprising. Eds. R.P. Singh, G. Manchanda, K. Bhattacharjee, Panosyan H. Elsevier Academic Press, 2022, p. 177-204.

Տպագրության է ներկայացվել մեկ գրքի գլուխ.

Raffi Shakhmuradian, Diana Ghevondyan, Armine Margaryan, Hovik Panosyan. Current state of research on biopolymer production by extremophilic microbes. In: Microbial essentialism: an industrial prospectives. Eds. R.P. Singh, S. Sarsan, A. Kumar, G. Manchanda, H. Panosyan Elsevier Academic Press, 2023. (in press):

Սոնա Հազարապետի Նիկոլյան՝ երկրորդ տարվա հեռակա ուսուցմամբ ասպիրանտ (գիտական ղեկավար՝ կ.գ.դ., դոցենտ Ա. Ա. Փոլադյան):

Հաշվետու ժամանակահատվածում հավաքել է բոլոր անհրաժեշտ կրեդիտները:

Սույն թվականի հուլիսի 9-13-ը մասնակցել է FEMS 10-րդ կոնգրեսին՝ հանդես գալով բանավոր (5 րոպե տևողությամբ) զեկուցմամբ և հուլիսի 24-28-ը Հունաստանի Թեսսալոնիկի քաղաքում անցկացվող կենսաշրջանաձև կենսատնտեսությունների վերաբերյալ ամառային դպրոցին, որից ստացել է ևս 2 կրեդիտ:

Հունիսի 30-ին տպագրության է ներկայացվել «Fe (III) ions Effect on Hydrogenase Activity and Growth of the Cupriavidus necator H16 strain in Various Growth Media» վերնագրով հոդվածը «Energy Nexus» ամսագրում:

Հայցորդ Ջեմմա Գուրգենի Մանոյան (գիտական ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Լ.Ս. Գաբրիելյան):

Հաշվետու ժամանակահատվածում բանավոր զեկույցով հանդես է եկել 2023 թ. մայիսի 11-ին և 12-ին ՀՀ ԳԱԱ Հ. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտում կայացած «Երիտասարդ գիտնականների միավորման» և «Կենսաքիմիկոսների հայկական ասոցիացիայի» կողմից կազմակերպված «Կենսաքիմիան իմ մասնագիտությունն է» խորագրով գիտական միջոցառմանը «Հայաստանում մեկուսացված կանաչ ջրիմուռներում H 2 –ի արտադրությունը կենսածին տարրերի անբավարարության պայմաններում» թեմայով:

Հաշվետու ժամանակահատվածում տպագրել է 3 հոդված, մեկը՝ միահեղինակությամբ.

- Harutyunyan AA, Manoyan JG, Hambaryan LR, Gabrielyan LS. (2023) Effect of various carbon sources on the growth properties and morphology of Spirulina platensis. Proceedings of the Yerevan State University, B: Chemical and Biological Sciences, V. 57, N. 2 (261): 164-171. https://doi.org/10.46991/PYSU:B/2023.57.2.164

- Manoyan J. Growth and hydrogen production by Chlorella vulgaris Pa-023 under sulfur and nitrogen deprivation, (2022) Biological Journal of Armenia 4(74), 6-11 https://www2.flib.sci.am/journal/Biology/
- Hovhannisyan Z., Timotina M., Manoyan J., Gabrielyan L., Petrosyan M., Kusznierewicz B, Bartoszek A, Jacob C., Ginovyan M., Trchounian K., Sahakyan N., Nasim M.J. (2022) Ribes nigrum L. extract-mediated green synthesis of silver nanoparticles and their antibacterial action mechanisms. Antibiotics, 11, 1415. https://doi.org/10.3390/antibiotics11101415

Գիտաժողովի նյութեր

- Муравицкая А.О., Светлаков В.И., Бондаренко В.Ю., Самович Е.В., Козел Н.В., Соколик А.И.,Габриелян Л.С., Маноян Д.Г., Демидчик В.В. (2023) Оценка продукции биоводорода и цифровой анализ фенотипа водорослей семейства *Chlorellaceae* беларусских и армянских штаммов. Межд. научная конференция "Настоящее и будущее биотехнологии растений", НАН Беларуси, 24-26 мая, Минск, Беларусь, с. 135, ISBN 978-985-880-344-5.
- Harutyunyan A, Manoyan J, Gevorgyan S, Gabrielyan L, Aghajanyan A, Gabrielyan L. (2023) The physicochemical and antimicrobial properties of silver nanoparticles synthesized by Spirulina biomass.International Conference «New Emerging Trends in Chemistry», Yerevan, Armenia, September 24-28.
- Մանոյան Ջեմմա, Փանոսյան Էրիկա Գարեջրի թափոնի կիրառությունը Chlorella vulgaris-ի կենսազանգվածի և կենսաջրածնի ստացման նպատակով: ԵՊՀ ՈՒԳԸ Գիտական հոդվածների ժողովածու (տպագրության մեջ):

Կենսաֆիզիկայի ամբիոնի հայցորդ Սվետլանա Գրիգորյան (գիտական ղեկավար կ.գ.դ., դոցենտ Մ.Ա. Փարսադանյան)

Նշվեց, որ Ս. Գրիգորյանը այս ընթացքում հանձնել է 5 առարկայից քննություն՝ հավաքելով 18 կրեդիտ: Հաշվետու ժամանակաշրջանում նրա հեղինակությամբ հրատարակվել է 1 հոդված, որը տպագրվել է Scorpus շտեմարանում ընդգրկված գիտական ամսագրում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ատեստավորել հետևյալ ուցուցմամբ ասպիրանտներին և հայցորդներին, հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում՝ (2022-2023թթ.) նրանց կողմից կատարած ուսումնական և հետազոտական աշխատանքները և ամբիոնների կարծիքները:

3. ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտներ Սիլվարդ Կարենի Թադևոսյանի և Տիգրան Մակեդոնի Ալեքսանյանի թեկնածուական ատենախոսությունների թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի գրասենյակի ղեկավար-դեկանի տեղակալ՝ կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը: Նա ներկայացրեց ասպիրանտների թեմաները և առաջարկվող ղեկավարներին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաստատել առաջին տարվա առկա ուսուցմամբ ասպիրանտ Սիլվարդ Կարենի Թադևոսյանի և Տիգրան Մակեդոնի Ալեքսանյանի թեկնածուական ատենախոսությունների թեման և նշանակել գիտական ղեկավարներին:

Սիլվարդ Թադևոսյանի թեկնածուական ատենախոսության թեման «Հայաստանի տարածքին բնորոշ որոշ բույսերի երկրորդային նյութափոխանակության արգասիքների հակաբակտերիական ակտիվության մեխանիզմները» Գ.00.04 կենսաքիմիա մասնագիտությամբ:
Գիտական ղեկավար՝ կ.գ.թ., ասիստենտ Ն. Սահակյան:

Տիգրան Ալեքսանյանի թեկնածուական ատենախոսության թեման «Հեշտոցից մեկուսացված կաթնաթթվային բակտերիաների պրոբիոտիկային ներուժը» Գ.00.07 Միկրոբիոլոգիա. Կենսատեխնոլոգիա մասնագիտությամբ:
Գիտական ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Ի. Բազուկյան:

4. ԼՍԵՑԻՆ՝ ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթին մասնակցելու համար կենսաբանության ֆակուլտետից թեկնածուների առաջադրման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի գրասենյակի ղեկավար-դեկանի տեղակալ՝ կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաշվի առնելով բարձր առաջադիմությունը և ակտիվ մասնակցությունը գիտահետազոտական և հասարակական աշխատանքներին՝

Լևոն Օրբելու անվան կրթաթոշակը շարունակել հատկացնել կենսաբանության ֆակուլտետի «Գենոմիկա և բժշկական բջջագենետիկա» մագիստրոսական կրթական ծրագրի առաջին կուրսի ուսանողուհի Լիլիթ Սերոբի Իսկանդարյանին:

Նորայր Սիսակյանի անվան կրթաթոշակի համար առաջադրել կենսաբանության ֆակուլտետի «Կենսաֆիզիկա և կենսաինֆորմատիկա» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրի չորրորդ կուրսի ուսանողուհի Արփինե Գրիգորյանի թեկնածությունը:

Արմեն Թոչունյանի անվան կրթաթոշակը շարունակել հատկացնել կենսաբանության ֆակուլտետի «Կիրառական մանրէաբանություն» մագիստրոսական ծրագրի 2 կուրսի ուսանողուհի Աննա Գևորգի Գալստյանին:

5. ԼՍԵՑԻՆ՝ ֆակուլտետի ուսումնական և գիտական գործընթացի հետ կապված որոշ ընթացիկ հարցեր:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի գրասենյակի ղեկավար-դեկանի տեղակալ՝ կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը:

Խոսվեց ֆակուլտետի լաբորանտի պաշտոնի անձնագրի (աշխատանքի նկարագրերի) մշակման մասին, որտեղ պետք է ներկայացվեն լաբորանտի պաշտոնին առաջադրվող պահանջները, աշխատանքային պարտականությունները, նշելով կոնկրետ գործառույթներ, հաշվի առնելով ֆակուլտետի առանձնահատկությունները:

Նշվեց նաև ֆակուլտետի տարեկան պլանով նախատեսված աշխատանքների հաշվետվությունների ներկայացման ժամկետների մասին:

Դեկանի տեղակալը տեղեկացրեց նաև հոկտեմբերին կայանալիք «BioEXPO» («ԲիոԷՔՍՊՈ») ցուցահանդեսի կազմակերպման մասին, որին իր ակտիվ մասնակցությունը պետք է ներկայացնի կենսաբանության ֆակուլտետը: Նշվեց, որ էքսպոն կանցկացվի ԵՊՀ բակում, որտեղ ֆակուլտետները կներկայացնեն կրթական ծրագրերը, իսկ գործընկերները՝ աշխատանքի առաջարկներ:

Նշվեց նաև, որ բուսաբանության և սնկաբանության, կենդանաբանության և էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնների կողմից նախատեսվում է մագիստրոսական նոր ծրագրի «Շրջակա միջավայրի պահպանություն և կենսաանվտանգություն» մեկնարկ:

Հաջորդիվ խոսվեց ուսանողների շրջանում անցկացվող դասախոսների, դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ անանուն հարցումների արդյունքների վերաբերյալ և նշվեց, որ հարցման արդյունքները պետք է քննարկվեն ամբիոններում:

Քննարկվեցին էլեկտրոնային ուսուցման (E-Learning) համակարգում դասապլանների, նյութերի տեղադրման ժամկետները և «Ռեգիստրար (Registrar)» համակարգում դասընթացների բաղադրիչների առավելագույն միավորների ընտրության և գնահատականների մուտքագրման կարգը:

Հայտարարվեց նաև ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համալրման նպատակով մրցութային ընտրություն հայտարարելու մասին: ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի գրասենյակի ղեկավար-դեկանի տեղակալ՝ կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը գիտական խորհրդի անդամներին հայտնեց իր մասնակցության մասին կենսաբանության ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին: Գիտական խորհրդի անդամները դրական կարծիք հայտնեցին Կ.Ա. Ղազարյանի թեկնածության վերաբերյալ: Արտահայտվեցին՝ ԵՊՀ բուսաբանության և սնկաբանության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, կ.գ.դ. Սիրանուշ Գերասիմի Նանազյուլյանը, ԵՊՀ մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի

վարիչ, դոցենտ, կ.գ.թ. Աննա Ֆելիքսի Կարապետյանը, էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի վարիչ, դոցենտ, կ.գ.թ. Հասմիկ Սեդրակի Մովսեսյանը, կենսաբանության ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ Ռուզաննա Հարությունյանը, որոնք բարձր գնահատեցին Կ.Ա. Ղազարյանի աշխատանքը կենսաբանության ֆակուլտետի դեկանի տեղակալի պաշտոնում, ով հմուտ կազմակերպում է ֆակուլտետի գիտակրթական գործընթացների հաջող ընթացքը: Առանձնահատուկ նշվեց Կ.Ա. Ղազարյանի ծավալուն աշխատանքը, հատկապես հեռավար կրթության կազմակերպման ժամանակ: Covid-19 համաճարակի պայմաններում Կ. Ղազարյանն ուսումնական գործընթացների բնականոն ընթացքի ապահովման հիմնական իրականացնողն էր և պատասխանատուն: Գիտական խորհրդի անդամները կարևորեցին Կ.Ա. Ղազարյանի կողմից իրականացվող աշխատանքների պատշաճ և բարեխիղճ կատարումը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ բաց քվեարկություն արդյունքում (միաձայն) երաշխավորել ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու համար կենսաբանության ֆակուլտետի գրասենյակի ղեկավար-դեկանի տեղակալ՝ կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանի թեկնածությունը:

Գիտական խորհրդի նախագահ՝
կենսաբանության ֆակուլտետի գրասենյակի
ղեկավար-դեկանի տեղակալ՝ կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյան

Գիտական խորհրդի քարտուղար, կ.գ.թ., դոցենտ՝ Ի.Վ. Շահազիզյան